ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/7 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով մշակութային օբյեկտների հիմնանորոգման (Հայաստանի ազգային պատկերասրահի շենքի մասնակի վերանորոգման) աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.10.2023թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաճողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Մասիս Աղայանց /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հովսեփ Գրիգորյան /գնահատող/

Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

Արմեն Քոչարյան /բացող/

Արտյոմ Պետրոսյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 «ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/7» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/7 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ	eldogare@yandex.ru
2	«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ	edgarsaruxan@mail.ru
3	«ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «ԲԻԴԵՔ» ՍՊԸ կոնսորցիում	builderconstruction.llc@gmail.com

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ		«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ		«ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	244871375	175881010	211057212	182532620	219039144	192612645	231135174

5. Մասնակիցների հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5.1 **«ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ**-ի, **«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ**-ի և **«ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ**-ի հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

6.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի պահանջները ապահովելու և մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով, կասեցնել գնահատման գործընթացը, դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ **«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի** կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման իսկությունը ստուգելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 Հանձնաժողովի նիստը շարունակել ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը ստանալուց և հանձնաժողովի կողմից մասնակիցների փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 19.10.2023թ. ժամը 15:00-ին

7. Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների իսկության ստուգման արդյունքների մասին.

7.1 ՀՀ ֆինանսների նախարարության 16.10.2023թ թիվ 12/12-2/20274-2023 գրությամբ հաստատվել է **«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի** կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման իսկությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Տվյալներ մասնակցի հայտում առկա փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8.1 «ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

- Հավելված N 1՝ Դիմում-հայտարարությունում սխալ է նշված գնման ընթացակարգի ծածկագիրը:
- Ծավալաթերթ-նախահաշվի բաժինների կշիռները սխալ են հաշվարկված, 4-րդ բաժնի «Պարապետի բազալտե գլխադիրի վերանորոգում» ենթաբաժնի 4-րդ կետում մասնակցի կողմից լրացված «քանակը» սյունակի թիվը չի համապատասխանում հրավերին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8.2 «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Ծավալաթերթ-նախահաշվում բաժինների անվանումները չեն համապատասխանում հրավերին, բացի այդ՝ ոչ բոլոր բաժինների կշիռներն են հաշվարկված և լրացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8.3 «ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «ԲԻԴԵՔ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

9.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ-ին** և **«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 8.1 և 8.2 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9.2 Հանձնաժողովի նիստը շարունակել 2023թ. հոկտեմբերի 23-ին, ժամը 15:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 23.10.2023թ. ժամը 15:30-ին

10. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

10.1 **«ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ-ն** և **«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ**-ն սահմանված ժամկետում շտկել են հանձնաժողովի կողմից 8.1 և 8.2 կետերով արձանագրված անհամապատասխանությունները և շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

11. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.

11.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին տեղ զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ** -ին:

2-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել **«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ին:**

3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «ԲԻԴԵՔ» ՍՊԸ կոնսորցիումին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

12. Գնահատման արդյունքների մասին.

12.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մասիս Աղայանց /նախագահ/

_____ Հովսեփ Գրիգորյան

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Արմեն Քոչարյան

_____ Արտյոմ Պետրոսյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/